

# ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ\*

ՎԵՊ

ՀԱՆՐԻ ԲՕՐԴՈՒ

VIII

Իր հարսանիքի առաւօտեան, Սննին, հէնց որ զարթնեց,  
վաղ տուեց դէպի լուսամուտը: Նա ցանկանում էր տեսնել  
պայծառ օր կը լինի թէ ոչ: Արշալոյալ հիանալի էր. արեւել-  
քի կողմից ծփում էին վարդամառ երկայն շերտեր. հորիզոնի  
ծայրին, գէպի արեւմուտք, մի քանի թեթեւ ամպեր կարծէք  
փախչում էին և հալուում: Մանկամարդ աղջիկը երջանկութեան  
բարեգուշակ նշան համարեց այդ պայծառ երկինքը: Նա երկար  
դիմուց այդ ընտանի տեսարանը, աշխատելով վերջին անգամ  
դմայլուել նրանով. նա ժպտաց մեղմիկ: Երիտասարդութիւնը  
յաղթում էր տխուր մտածողութիւններին և ջահէլ աղջիկը հա-  
ւատ ունէր կեանքի, երջանկութեան, իր սիրոյ վրայ:

Նրան օգնեցին պսակի շորերը հագնելու: Գունատ՝ յուղ-  
մունքից, նա բարձր և բարակ էր երեւում իր ծանր-պոչաւոր  
ատլասէ շրջազգեստի մէջ և նման էր այն առասպելական  
իշխանուհուն, որ տիրութիւնից մեռնում էր իր մելամաղձիկ  
պալատի մէջ: Հայելիները արտացոլում էին նրա նուրբ և չնոր-  
հալի կերպարանքը, մի մաքուր, ծանր արտայայտութեամբ և  
գրեթէ միստիկականութեամբ տպաւորուած կերպարանք:

Ծաղիկների ահազին վնջեր, որոնց մէջ աչքի էին ընկ-  
նում վարդերը, անոյշ բուրմունք էին տարածում սենեակի մէջ:  
Սրահը իջնելուց առաջ, երբ նա մի անգամ եւս նայեց

\*.) Տե՛ս «Մուլճ» № 5.

լուսամուտին, չը կարողացաւ բռնել զարմանքի մի նոր բացականչութիւն։ Այն ամպերը, որ փոքր ինչ առաջ հազիւ նկատել էր, սկսել էին բռնել ամբողջ երկինքը. ուրախութեան նշանները չքանում էին։

Ժաննին, թարմ և զուարթ իր վարդագոյն արդուզարդի մէջ, եկաւ հրախիրելու նրան։

—Քեզ սպասում են, ժամանակ է...

Եւ դուրս գալուց առաջ, կրտսեր քոյրը քնքշաբար գրկեց իր անդրանիկ քրոջ և արտասուելով, կրկնեց.

—Դու երջանիկ կը լինես. դու յաճախ մեղ մօտ կը զառ, այնպէս չե։

Սրահում, ժակը, իր սովորական գոռող կեցուածքով, ձկուն և չնորհակազմ ֆրակի մէջ, որ շատ լաւ նստում էր նրա վրայ, ճառում էր մասնաժողովի մի քանի բարեկամների մէջ. այդտեղ էր Յարօն՝ գիրուկ և ուղղապահ, ինչպէս միշտ, փաստորան Բրէնան, որ արդէն բծաւորել էր իր ժիկտն. վերջապէս Շարավին, նօտարը, որ փայլում էր ուրախութիւնից, որովհետեւ կարողացել էր հեռացնել Տայլարին և ամուսնական դաշնագիրն ինքն կազմել։

Սպազրթախիտ ծառերի շուաբի տակ, կոմս Ֆերրէզին գծագրում էր Լիւսիէն Հալանդին Խտալիայում տիրող թշուառութեան մռայլ պատկերներից մինը. Կոմսուհին՝ շողզողում էր փայլուն գեղեցկութեամբ իր չքեղ շրջազդեստի մէջ, որ ծովի ջրի կապուտակ գոյնն ունէր. նա խօսում էր տիկին Մէրանի հետ և այնպէս էր պահում իրան, որ իբր ոչ մի ուշադրութիւն չէ դարձնում իր սիրեկանի վրայ, որն այնպէս էր նայում նրան, որ կարծես մի նոր գեղեցկութիւն էր զտել նրա մէջ։

Աննին մանելով սրտի անձկութիւն զգաց, նկատելով, թէ որքան ժակի միտքը հեռու էր իրանից. նա մտածեց.

—Որքան փոքրիկ տեղ եմ գրաւում ես նրա կեանքի մէջ։

Վշտի մի թեթեւ ստուէր սահեց նրա դէմքի վրայ և միայն Լիւսիէնը նկատեց այդ ստուերը. Նախընթաց երեկոյին նա մի շատ եռանդուն վիճարանութիւն էր ունեցել իր բարեկամի հետ. նա պահանջել էր նրանից վերջնականապէս խզել իր յարակցութիւնը. նա սպառնացել էր նրան տեղեկացնել պ. Մէրանին, նա հրաժարուել էր խաչեղբայր լինել. Ժակ Ալվարը առաջ սկսել էր ծաղրել և կատակ անել.

—Քո ինչ դորձն է. ես տեսնում եմ, որ դու անտարբեր չես դէպի իմ կինը... ես կը վարուեմ, ինչպէս հաճելի է ինձ. Դու ոչինչ չես ասի, որովհետեւ դու իրաւունք չունես այդպիսի բան անելու։

Հալսնդը պատասխանել էր խիստ կամակորութեամբ թէ ինքն այնքան կապուած է Մէրանների հետ, որ չէ կարող գաւաճանել նրանց իր յանցաւոր լոռութեամբ եւ ժակը հասկացել էր, թէ եւ առանց պատճառն ըմբանելու, որ իր անակնկալ հակառակորդի զիտաւորութիւնը վճռական է, ուստի և ձարպիկութեամբ զիջել էր՝ փակելու համար այդ միջնադէպը, որին նա կարեւորութիւն չէր ատլիս և երգուել էր հանդիսաւորապէս, որ այլ նս չի վերանորոգի յարաբերութիւնները իր սիրունու հետ:

Տիկին Ֆերրէզին զրկեց նորատի հարսին:

—Ինչքան գեղանի էք, ամենասիրելիդ իմ:

Նրա փայլուն աչքերից, նրա գաղտակրեայ մորթից, նրա մարմնի կլորիկ զծերից մի դրգափչ մեղկութիւն էր բջիռում: Ժակի զգայասէր աչքին նա անհամեմատ աւելի գեղեցիկ էր երեսում քանի գողարիկ և քաղցր Աննին:

Լիւսիէնը, տեսնելով այդ համբոյրը, շրջեց նայուածքը: Մի անհուն տիրութեամբ համակուեց նա: Նա լսեց այն չքմեզ կօմպիմէնտները, որ ժակը, մօտենալով երկու կանանց, ուղղում էր նրանց իր յանկուցիչ ձայնով.

—Անտարակոյս, մտածեց նա, ժակի արատաւոր ընութիւնը հաճոյք է գտնում տեսնելով կնոջը և սիրուհուն միասին: Ժակը մօտեցաւ լիւսիէնին.

—Մենք զնում ենք այս երեկոյ Աix-les-Bains: Մէր ընակարանը արդէն վարձուած է: Ապա մենք կ'անցնենք տասն և հինգ օր կամ երեք շաբաթ իտալիայում, որտեղից կը գնանք մշտապէս ապրելու Պարիզում: Ես ցանկանում եմ հասնել Պարիկ պարլամէնտի գումարուելուց առաջ, որպէս զի լաւ ուսումնասիրեմ հողը և պատրաստուեմ իմ կատարելի գերի համար:

Եւ նա յարեց.

Կարդացիր այսօրուայ «Ֆիզարօ» լրագիրը: Հետաքրքիր գուշակութիւններ կան նոր պարլամենտի մասին: Ինչպէս երեւում է մեր նոր երէցիոնանները շատ էլ ուժեղ չեն: Իմ մասին մի սիրալիք խօսք կար գրուած:

Աննին նայում էր նրան հեռուից բարութեամբ:

—Նա երեւակայում է որ ժակը ինձ հետ իր մասին է խօսում, մտածեց լիւսիէնը՝ մոայլուած: Եւ երբ ժակը թողեց նրան և զնաց ողջունելու հիւրերին, նա խորասուզուեց մտածմունքի մէջ:

—Ես տիսուր եմ, որտիհետեւ կատարւում է մի վերջնական գործողութիւն, որ բաժանում է ինձ Աննիից: Այժմ, ար-

դէն շատ անագան, ես հասկանում եմ այն սիրագեղ գորովը, որ բղիում է այս մատաղ սրտից, նրա զգացումների ուղղամտութիւնը և պչրանքի բացակայութիւնը նրա նուրբ և չսորհալի յատկութիւնները կը բարգաւաճէին երջանկութեան մէջ, Սակայն նա ընթանում է, առանց նայելու, դէպի անդունդ։ Հին ժամանակները այդպէս զարդարում էին զոհուելու յատկացրուած կոյսերին։ Չը գիտեմ, սիրում եմ ես նրան, բայց գիտեմ, որ նրա ապագայ ցաւերի տանջանքը ճմլում է սիրուս։

Պարոն Հալանդ, չորհնեցէք ինձ ձեր թեւը. դուք միշտ մոռանում էք ինձ, ասաց նրան ժամանին, որ հարսնաքոյր էր։

Հալանդը նկատեց որ հարսնական շքախումը կազմուել էր արդէն և ամենքը պատրաստ էին մեկնելու։

Կառք նստեցին։ Եկեղեցու մայթի երկու կողմից գիւղացիները ցանկապատ էին կազմել։

Կանայք ստուար թուով եկել էին տեսնելու ժիրանց օրինադիր պսակադրութիւնը նրանց մէջ կային կնձուապատ պառաւներ, նոյնչափ հետաքրքիր և եռանդուն, ինչպէս ջահէլ կանաքը, որոնք զլուխնին ծածկել էին պայծառ թաշկինակներով և իրանց աչքերով լափում էիի հարսնիքաւորների արդուզարդը, Եկեղեցու դռան կանգնած էր ծերունի ժամկոչը, ոսկրոտ և խրոխտ, բոլորովին կորսուած իր լայն կարմիր զգեստի մէջ, մաշուած թէն, բայց կարկատուած և յղկուած հանդիսի առիթով—մի կատարեալ Դօն-Քիշօտ Սանչօի հագուստով—յենուել էր արժանապատութեամբ իր գաւագանի վրայ. նա լրբարար վարւում էր ամբոխի հետ և կոպտաբար հաստատում էր կարգը։ Մի ժամ առաջ նա վարում էր հողը և մի ժամից յետոյ նա վերադառնալու էր իր դաշտը. Բայց ժամանակաւորապէս հազած խայտածամուկ պատմուածնը ներչնչն էր նրա մէջ իշխողասիրական ձգտումներ և ցանկութիւն՝ յարգուած տեսնելու իրան ամենքից։

Կառքերը հետպհետէ կանգնեցին։ Ժակը նայում էր ամբոխին. նա գնում էր պսակի արարողութեան, որպէս թէ զընում էր մի ընարողական ժողովի։ Աննին ամբողջովին տրգործուած էր իր երազով. նա նմանում էր հին պատկերների սրբերին իր հրեշտակային և լրջախոհ դէմքով։

Սրեգակը երեւաց և կապոյտ ու կարմիր լոյսի ամբողջ կոհակներ թափեց Եկեղեցու վրայ լուսամուտների գունաւոր ապակիների միջով։ Սեղանի թռոռուած ոսկեզօծութիւնը, քահանայի շուրջառը, գսիրների կարմիր շապիկները, նորահարսի արծաթափայլ շրջազգեստը, հարսնիքաւոր տիկնանց մետաք-

սի, մնդուսի և մուարի զգեստները փայլեցին այդ ոսկեղօծ փոշու մէջ: Խղճուկ գիւղական եկեղեցին կարծես կախարդուած հմայքով կերպարանափխուել էր:

Մէսթօնի քահանան—շինական մի բարի քահանայ, ծերանի և առաքինի—մի քանի օրից ի վեր պաշարել էր մտքի մէջ գեղեցիկ ոճերի և ասացուածների մի ամբողջ կոյտ Բայց արտասանելով լատին բնաբանը, նա մոռայաւ իր պատրաստած ճառը և խօսեց այնպէս, ինչպէս սիրան էր թելազրում նա նկարագրեց քրիստոնէական ամուսնութեան պատկերը, ցոյց տուեց տղամարդին և կնոջ՝ սիրել միմևանց անձնուէր, առանց յետին մտքերի, նուրիբագործելով իրանց սէրը աստուածային սիրով, զօրեղացնելով միմևանց և բարձրանալով կեանքի մէջ իրանց փոխադարձ համակրութեամբ և յարգանքով:

Սննին, խանդակաթ, քահանայի խօսքերի մէջ իր սեպհական մտածմունքն էր գանում, իսկ ժակը մտածում էր քմիղարօյին յօդուածի մասին:

Պատիի օրհնութեան ժամանակ տիկին Ֆերրէզին շիփ սպիտակ դարձաւ Սննիի շրջագգեստի սմբան, և Լիւսիէն Հալանդը զգաց իր գանութեան սաստկանալը:

Երբ արարողութիւնը վերջացաւ, ամենքը խմբուեցին նեղ խորսնի մէջ. չորհաւ որութիւններով և բարի ցանկութիւններով հեղեղեցին նորապասկ Աննիին, որ ժպտում էր առ քաղաքավութեան: Տիկին Մէրսանը այս անգամ ևս չէր զսպում իրան ամեն բան գովիլուց: «Այս բարի քահանան հիանալի խօսնեց, իսկ արեգակը, նա նորապասկ ամուների յաջողութեան համար ամեն բան կատարեց: Աղջկաս գլխին պսակ էր կազմուած, ոհ, որքան գեղեցիկ է այդ սիրունիկ երեխաս: Ժամկոչը շատ պատշաճ հաղուստ ունէր. տեսնք ինչպէս ամբոխը ակնածաւոր էր. միսիթարական է տեսնել այսպիսի բարեպաշտ տեսարաններ այս ժամանակում, երբ մենք ապրում ենք...»: Նրա ամուսինը, տիսուր, մտածում էր այն գատարկութեան մասին, որ պէտք է գոյանար տան մէջ իր լուակեաց և գորովալիր Աննիի բացակայութեամբ: մայօր Բարօն, բարձրահասակ, ձևուացի մեծ շարժումներ էր անում և Բրէնան, սեղմուեած երկու գիրուկ տիկինների մէջտեղ, հաշիւներ էր անում. Ալվարը Մէսթօնի համայնքի փաստաբանն է. համայնքը մի խոշոր գատ ունի. ես նրան կը յաջորդեմ...: Նա բարեկամալար սեղմեց իր պաշտօնակցի ձեռքը: ժակը, որ հանգամանքների առաջ խունարհուելու ձարպիկութիւնն ունէր, լայնում էր ամենքին՝ տեղին յարմար իր այդ ձկունութեամբ: Տիկին Ֆերրէզին, որի ձեռ-

քը ժամկը մի վայրկեան աւելի էր պահել, գունատուել էր ուրախութիւնից, գորովանքի այդ նշանը տեմնելով:

Դուրս գալով եկեղեցուց, նորապսակները հարսնախմբի առաջն ընկան: Դուան առաջ մի փոքր շուն խափանեց նրանց ընթացքը: Ժակը ոտքով դէն շպռտեց չնիկին և այդ այնքան արագ կատարուեց, որ հազիւ նրա շարժումն նկատեցին:

— Օ, ահա մի մարդ, որ ամեն տեղ կարող է հարթել իր համար ճանապարհ, ասայ ծիծաղելով մի զիւղացի:

Մի քանի աղաղակներ վկեցից նորահարսը, կեցցէ պատգամաւորը՝ շոյեցին Ալվարի անափառութիւնը: Ժողովուրդը նրա աջքում միշտ ուրիշ բան չէր, եթէ ոչ աղմկալից ցոյցեր անելու համար մի մեքենայ:

Հարսնեկան խրախճանը երկար եղաւ և հանդիսաւոր, ինչպէս ընդունուած է գաւառներում: Սակայն քիչ քիչ ծանրաբարոյութեան սառուցը հալուեց և ուրախութիւնը սկսեց տիրել: Միայն պարոն Մէրանը և թարօ մայօրը չէին մասնակցում ընդհանուր ուրախութեան: Սուաջինը տիրել էր իր զւեւկից բաժանուելուն համար և այդ վշտի վրայ աւելանում էր նաև տհաճութիւնը՝ ճաշելու այնպիսի մարդկանց հետ, որոնք ոչինչ չէին հասկանում, մի քանիսը, մասնաւորապէս կանաչը, ոչինչ չէին հասկանում մառանի գինիներից, իսկ ումանք, մասնաւորապէս տղամարդիկ, չէին կարողանում խօսակցութիւնը վառ պահել «Ամեն մի կարգին մարդ, հաւատացնում էր նա իր մի հասակաւոր և մտացի զրացուհուն, պէտք է շաբաթը մի անգամ ճաշ տայ, բայց հիւրերը բացառապէս ընտրովի պէտք է լինեն»: Եւ ընտրովին ասելով նա հասկանում էր նուրբ սրախօսութեան և որկրամոլութեան մէջ զարգացած մարդկանց: Ինչ վերաբերում է մայօրին, սա կրկնում էր մաքում այն կենացը, որ անզիր սերտել էր և զարհուրելով նկատում էր որ մոռացել է վերջարանը, որը նա որոնում էր, աչքերը սպառնալից կերպով յասելով իր զիմացինի վրայ: Կոմսուհի Ֆերբէզին մտարերում էր ժակի ձեռքի իմաստաւոր սեղմումն խորանում, և զրա մէջ նկատում էր երկարատեւ սիրոյ խօստումն և, առանց զոռոզութեան, այսուհետեւ նա ընդունում էր կանխաբաժնաման և նոր դաւաճանութեան միտքը: Լիւսիէն Հալանդը, նստած ժաննի Մէրանի կողքին, բոլորովին զարմացած էր մնացել լսելով ջահէլ աղջկայ շնորհալի և շաղակրատ խորհրդագութիւնները: «Ես երբէք չէի նկատում այս փոքրիկին», մտածեց նա և անարդարաբար նա յարեց, «Ես աղջիկը զուարձալի կը լինի և պչրասէր», առանց որոշելու նրա պայծառ աշ-

քերի շիտակութիւնը և մելամաղձութիւնը, երբ այդ աչքերը տնկում էին նրա վրայ, Աննին, մի քիչ նեղուած իրան շրջապատող ծանր ուրախութիւնից, ժպտում էր իր ամուսնու տափակ եւ զուարճալի սրախօսութիւններին, նա յոգնածութիւն էր զգում բալոր այդ վկաններից, որոնք խամրում էին իր երջանկութիւնը դիտելով նրան, մինչդեռ ժակը ուտում էր ախորժակով և, իրան տնացի համարելով, չէր քաշւում նկատողութիւններ անելու սպասաւորութեան մասին և գանգատուելու, թէ Յուրգոյն զինին պաղեցրել են փոխանակ տաքացնելու:

Կէսօրից յետոյ նորապսակները չքացան, երբ երիտասարդները սկսեցին պարել կըսի գնացքը մեկնում էր ժամը վեցին:

Համելով կըս, նրանք իջեւանեցին շքեղ հիւրանոցում բռնած բնակարանում: Տեղաւորուելուց յետոյ ժակը տարաւ կնոջն ակումբ՝ ճաշելու: Տափաստանից տեսարանը տարածում էր ծառաստանի վրայ, որ արդէն մոայլ էր այդ ժամին, և աւելի հեռուն՝ մինչեւ լիսները, որոնք դեռ լուսաւորուած էին մարմանող արեգակի վարդագոյն և նարնջագոյն շողերով:

Լճակի շուրջը տնկուած ծառերից կախուած էին վենետիկեան լապտերներ գիշերային տօնի համար: Երբ լուսավառութիւնը սկսուեց, բաղմագունեան երկար լուսաւոր ժապաւէնները ընդհատեցին ծառաստանի մթութիւնը և ցոլացին անշարժ լճակի մէջ: Դեռ լուսաւոր աղջամուղջին՝ աստղերը գուն էին գործում երեւալ, միայն Արուսեակը փայլում էր երկնակամարի վրայ: Սեպտեմբերի այն շերմ երեկոներից մինն էր, ուր ժամագիր են լինում, աքսորուելուց առաջ, ամառուայ գերազոյն պայծառութիւնները, վերջին ծաղիկները շտապում էին տարածել իրանց անուշահոսութիւնը նախ քան որ աշունը գայ վանելու իրանց բուրմունքը:

Տափաստանի վրայ, փոքրիկ լամպերը կանաչ կամ կարմիր լուսամիումներով լուսաւորում էին սեղանները իրանց հաճելի շողով:

Նորապսակները բռնեցին լաւագոյն սեղաններից մինը, վանդակապատի ծայրին, այն սեղանի կողքին, որ ամեն երեկոյ պահուում էր յունական իշխանի համար: Այդ սեղանների շուրջը լսում էր կաղինոյի շփոթ աղմուկը: Թէ զեկու զեփիւոք բերում էր սրանց պարերի երաժշտութեան հեռաւոր ձայնը, որ ընդհատուում էր ընդթիջումներով ճաչողների խօսակցութեամբ և սպասաւորների անկանոն չփշընկոցով:

Լամպերի լոյսերը, այլափոխելով ստուերները դէմքերի

վրայ, սաստկացնում կամ նսեմացնում էին դիմագծերը, տալով նրանց կանոնաւոր կամ անկանոն, յանցուղն կամ մեզմ արտայայտութիւն: Ճերմակ սփառցները, նրանց զարդարող դալուկ ծաղիկները, վարդագոյն մեխակը, կամելիան, պայծառ արդուզարդերը և օսլայած օձիքները առանձնապէս աչքի էին խփում այդ լուսաւորութեան մէջ:

Վառ զոյներով հատուստաւոր կանաքը, իրանց զրգուղ ձեերով և տղամարդիք՝ գործնական, անհանգիստ կերպարանքով, ոյ յատուկ է խաղամոլներին կամ պարապորդ շուայտներին, անդադար իջնում և բարձրանում էին մանուածազատ սանդուխով, որ շինուած էր տափաստանի երկարութեամբ: Մուալլ Փօնի վրայ, բոլոր այդ աղմկալից կեանքը լուսաւոր շրջմովիկ բծերի տպաւորութիւն էր թողնում:

Աննին մի բոպէ զուարձացաւ այդ տեսարանով, բայց շուտով նրա շրթունքների անկիւնում երեւաց յայտնի թախծալի արտայայտութիւնը: «Մեր բնակարանում, մեզ մօտ, բոլորովին միայնակ, աւելի լաւ ժամանակ կարող էինք անցկացնել, մտածեց նա: Բայց նա չարտասանեց այս խօսքը. նա չէր կամենում ամինափոքր նեղութիւն պատճառել իր ամուսնուն, որը, անտարակոյս, բերել էր իրան այդտեղ զուարձացնելու համար և այդ նոր տեսարանով հայթայթելու իրան ազատութեան իր ասածին ուրախութիւններից մինք: Վերագրելով ամուսնուն այդպիսի միտք, Աննին ժպտաց նրան անկեղծօրէն:

Ժակը լի էր չնորհքով և շատ լաւ տրամադրուած. բայց նա խօսում էր մի քիչ բարձրածայն, կարծէք կամենում էր, որ ամենքը լոեն իրան: Եւ, իրօք, դրացի սեղաններից նայում էին նրան: Կանաքը նկատում էին նրա գեղեցիկ կազմուածքը, նրա սուր աչքերը և խարտեաշ մօրուքը. նա, կարծէք, նրանց համար էր արտասանում իր գեղեցիկ ոճերը: Նա նստել էր այնպէս, որ ամբողջ գէմքը լուսաւորուած էր, մինչ Աննին նուրբ զէմքը բոլորովին աննկատելի էր մնում կիսամիթութեան մէջ: Աննին զգում էր, որ զիտում են իրանց և նեղուած՝ խոնարհեց աչքերը իր առաջը զրած ելակով լի ափսէի վրայ: Աւրեմն իր ամուսինը գեռ չէր պատկանում իրան միայնակ: Իր ամուսինը! նա կրկնում էր ինքն իրան այս երկու խօսքերը ուրախութեամբ. նա չէր կարողանում ասել այդ խօսքերը առանց կրկնելու. նա զգուում էր նրանցով իր համբ շրթունքը: Նա բարձրացրեց զլուխը նրան տեսնելու համար և որովհեան իր շուրջը շարունակ հիանում էին նրանով, ինքն աւելի քիչ հիացաւ:

—Կամենում էք գնանք ծառաստանը, հարցրեց Ժակը  
Անդին:

—Շատ լաւ, ասաց Աննին. օղը շատ մեղմ է, նա բռնեց  
Ժակի թեր և նրանք իջան դէպի ծաղիկների վիլան: Նրան  
զարմացրեց այն ձանձրոյթը, որ տիրում էր այդ շքեղ հասա-  
րակութեան մէջ, չը նայերով համատարած ուրախութեան:

Նրանք յամրաքայլ անցան խաղի սրահները, որոնք սկըս-  
ւում էին լցուել: Ժակը իր կնոջ հետ, զրոյց անելով հան-  
գերձ, երկու ոսկի դրեց կանաչ սեղանի վրայ, վեր առաւ չորսը  
և շարունակից ճանապարհը այս գործնական խորհրդածու-  
թեամբ: «Երեկոյի ծախքը հանեցին: Աննին նոյն իսկ չէր նկա-  
տել նրա արագ շարժումները և այդ բովէին նա զգուանք էր  
դգում դէպի այդ շպարուած կանանց, որոնք թեներով հրում  
էին նրան:

Այդ երեկոյ համերգ կար, երաժշտութիւնը զրգուիչ կեր-  
պով ազդում էր ջղերի վրայ և երգեցողութիւնը ամբողջովին  
տողորուած էր սիրոյ զգայասէր տանջանքներով: Աննին ճշն-  
շուած ձեռքը դրեց կրծքի վրայ: Նրա մէջ զարթեցին ջերմ և  
անձանօթ ուրախութիւնների նախազգացումներ: Նա դիմում  
էր դէպի այդ ուրախութիւնները աներկիւղ, հզօր իր սիրով և  
ամօթխածութեամբ: Ժակը տեսնում էր թէ ինչպէս երաժշտու-  
թիւնը արբեցնում է նրան, բայց չէր հասկանում, թէ ինչպէս  
կարելի է այդպէս սաստիկ ենթարկուել տպաւորութիւններին:  
Գեղարուեստի այդ անօգուտ մասնակցութիւնը սիրահարու-  
թեան այդ ժամին անհանոյ էր նրա մնապարծութեան: «Անոին  
թարմ է և շատ սպիտակ, մժածում էր նա, բայց իմ ճաշակին  
անյարմար է»: —Նրանք մտան ծառաստանը, նա բռնել էր կնոջ  
քնքոյց ձեռքը և նրանց մատները հիւսուել էին միմիանց հետ:  
Նա հակուել էր դէպի Աննին և ցած ձայնով խօսում էր նրան  
ծառերի տակ:

— Սննի, սիրում էք ինձ:

— Դեռ հարցնո՞ւմ էք, սիրում եմ!

Եւ բոլորովին թուլացած իր անսահման դորովանքի սաստ-  
կութիւնից, նա յենից իր քնքոյց գլուխը Ժակի ուսին: Նրանք  
անցան այդպէս մարզերի միջով և մտան մութ ծառուղիները:  
Ժակի համբոյը փակեց նրա աչքերը և երբ նա բացեց, նա  
տեսաւ, որ մանեկողները շրջապատել էին իրանց: Նա սաստիկ  
նեղացաւ և վիշտ զգաց: Ուրեմն աշխարհի որ կողմը պէտք էր  
գնալ ապրելու համար իր սիրոյ հետ, որպէսզի ոչ մի բան, ոչ  
մի շարժումն, ոչ մի խօսք, ոչ մի օտար նայուածք չը պլասրէ  
իր երջանկութեան վճիտութիւնը:

Նրանք վերադարձան տուն։ Բայց լուսամուտից նրանք նայում էին գիշերը։ Հեռում, անորոշ գծերով նկատում էին լեռները և փակում հօրիզօնը։ Աստղերի փայլը մի տիսուր արտայատութիւն ունէր, որ իրան էր քարչում Աննիի հոգին։ Կաղինոյից սրանում էին օդի մէջ բարձր փամփուշտներ՝ կարմիր, կանաչ և կապայտ լոյսով։ Ժակը, որ իր նայուածքը այդտեղ էր միայն ուղղել, ցոյց տուեց կնոջը, թէ ինչպէս հրավառութիւնը գեղեցիկ կերպով ցոլացնում էր գոյնզգոյն լոյսը լձի մէջ։

Աննին մտածում էր, «Մենք սիրում ենք միմնանց, ես նըրան եմ պատկանում, ես ամրողովին անձնատուր եմ լինում նրան։ Մենք մի անձը կըկաղմենք կեանքի մէջ մինչև մահը, որը միայն կըրաժանէ մեզ, կամ, աւելի ճիշտն ասած՝ կըրիացնէ մեր հոգիները յաւիտենական երջանկութեան համար։ Մենք միշտ կըսիրենք միմնանց, միշտ...»

Իսկ ժակը մտածում էր, որ անօգուտ պէտք է անցկացնէ մի քանի շաբաթ։ Նա յիշում էր գեղանի լէօնօրայի նուրբ համբոյրները, իսկ իր կինը, այդ թանկագին և դիւրահաւատ երեխան, անկարող էր իր մէջ սաստիկ ցանկութիւն գոգոնել։ Նա ոչ մի յուղմունք չէր կրում նրա անմեղութեան և մաքրութեան առաջ։ Երբէք նա իր հոգին չէր խառնում փայփայանքի հետ։ Այդ ընտիր և ծանր բովէին նա չէր նկատում այն հրաշքը, որ սէրը գործում էր այդ երկչու կոյսի մէջ, որն անձնատուր էր լինում իրան և յօժարում էր, առանց նոյն իսկ իմանալու, պատկանել իրան։ Երաժշտութիւնը հեռուեց հասնում էր նրանց և գոգուում էր կիրքը, իսկ գիշերուայ գաղջ քամին զարթեցնում էր նրանց մէջ ջերմ ցանկութիւն։

### Ժակը վճռեց.

—Որովհետև սիրելու ժամն է, սիրենք...։ Աննին դեռ դիտում էր գիշերը։ Նա թէկըուեց գէպի նրան։ «Աննի, տնւը ինձ շրթունքներդ»։

Եւ առանց սպասելու պատասխանին, նա համբուրեց նրա այտը և շրթունքը հպեցրեց շրթունքին։ Նա զգաց, որ Աննին ամբողջ մարմնով գողդողաց, զարհուրած այդ նոր, զեռ չըճաշկած մնալութեան զգացումից։ Նա չը տեսաւ նրա նայուածքը։ Այդ նայուածքը ցոլացնում էր մի անյալթելի տիրութիւն, մելամաղձիկ վիշտ իր կոյսութեան համար, որ փախչում, չքանում էր մեղմ գիշերուայ մէջ, այն նախազգաղման համար, որ ոչ մի բան չի փոխարինի, կեանքի ընթացքում, երջանկութեան խորհրդաւոր ակնկալութիւնը և թէ գգուանքներից յետոյ ու նոյն իսկ ժամանակ՝ կարող են վերսին երևալ հոգիների մըշ-

տընջենական տարբերութիւնները, սրտերի անանցանելի առանձնութիւնները...»

Երբ պարահանդէսը սկսուեց, Լիւսիէն Հալանդ վերկացաւ մեկնելու համար Տիկին Ֆերէզին անցաւ սրահի մի ծայրից միւսը և եկաւ նրա մօտ:

—Դուք չէք պարում, այս բոպէիս ես ձեզ էի նայում. դուք տիսուր և մտազբաղ կերպարանը ունէիք. Ինչ բանի էիք մտածում:

—Մի գրական յիշողութեան. Դանսէի այս ոտանաւորին թէատրիչի մասին. Երբ եա անցնում է նանապարհներով, երա նայուածել խաղաղութիւն է բերում:

—Ես չեմ տեսնում այսաեղ «չ ոքի», որին կարելի լինէր յարմարեցնել այդ ոտանաւորը:

Եւ երկուսն ես մտածում էին Անսիի աչքերի մասին.

—Վալսենք, կամենում էք, ասաց կոմսուհին:

Նրանք պարեցին. Լիւսիէնը մեծ հաճոքով հոտ էր քաշում և ծծում էր այն անոյշ բոյրը, որով սրսկուել էր կոմսուհին. Նրա դէմքը, որ շառագունել էր վալսից, հիացնում էր իրան, ինչպէս և նրա ազուակի թևերի նման սև մազերը. Լիւսիէնի հոգին տաղտկացել էր, մարմինը գրգռուել և նա տըռփանք զգաց այդ գեղեցիկ կնոջ համար:

Կոմսուհին կամեցաւ հանգստանալ և խնդրեց նրան մնալ իր մօտ:

—Միթէ չէք տեսնում, որ քիչ է մնում լաց լինեմ: Ես ման ևմ գալիս իրեւ գիշերաշրջիկ: Եւ սոսկալի կերպով տանջում եմ:

Խոստովանութեան կարիքը, որ կամաւ տանջում է կանանց, զրդում էր կոմսուհուն իր ցաւերը պատմել իր սիրոյ ծանր գաղտնիքի այդ խորհրդակցին: Բայց Լիւսիէնը կարեկից խօսքեր չունէր այդ երեկոյ և փափագելով միայնակ մնալ, թողեց նրան մի քանի վայրկեանից յետոյ:

Լիւսիէնի մեկնելուց յետոյ կոմսուհին ֆլիբտով զբաղուեց մի քանի երիտասարդների հետ առանց կարողանալու մոռանալ իր նախանձու վիշտը: Ժամ առ ժամ նա հետեւում էր մտքով Անսիին և ժակին և երբ, կէս զիշերի մօտ, իր ամուսինը տարաւ նրան Տալուար, նա առում էր արդէն հակառակորդուհուն մահացու ատելութեամբ, որի խորութիւնը նա երբէք չէր չափել և զգուանքով քննում էր այն սէրը, որ իրան իր սիրեկանի ստրուկն էր դարձնում:

Ավիւլի տանող շաւզի վրայ, Լիւսիէն Հալանդը կրկնում  
էր ինքն իրան գեղանի վշտացեալի խօսքերը,  
—ես ման եմ գալիս իբրեւ զիշերաշրջիկ:

Նա ինքն իրան էր յարմարեցնում այդ խօսքերը: Եւ որով-  
հետեւ մի ցաւալի անձկութիւն զգաց, նա կարծեց թէ սիրում  
է Անսիին: Յաձախ մեզ պէտք է անուղղելին—մահը կամ վերջ-  
նական բաժանումը—որպէս զի երեւան հանենք մեր զգացում-  
ների մեծութիւնը: Մենք ընթանում ենք կեանքի մէջ առանց  
լաւ ճանաչելու մեր սիրտը և միայն տանջանքն է որ յանկարծ  
ըմբռնել է տայիս մեղ մեր կորսափի ծաւալը:

Մութը կոփել էր, երբ Լիւսիէնը հասաւ իր տունը: Նա  
թիկն տուեց լուսամուտին, իր մօր առանձնասենեակում և չը  
թողեց որ ճրագ վառեն: Նա արդէն չէր դիմադրում իր վշտին:  
Նա կրում էր տղամարդի վիշտ և ոչ երիտասարդի չուտան-  
ցուկ ցաւ: Նա լուրջ կերպով մտածեց իր կեանքի մասին և  
բոլոր իր անցեալ կապերը, իր լքած սիրուհիները, իր բոլոր  
անցեալ տիրութիւնները երեւում էին իրան ունայն և թեթեւ  
իր կեանքի մասին ունեցած այդ խորհրդածութեան մէջ:

Նա հասկացել էր որ Պարիզում վարած իր պարապորդ և  
ունայն կեանքը սպանել էր իր երջանկութիւնը: Նա մտա-  
ծում էր:

—Իմ բնական կեանքս այստեղ էր: Այստեղ, սիրուած ու  
յարգուած ամենքից այն բարերարութեան համար, որ դարերով  
գործել են նախնիքս, ես կը պահպանէի իմ կրած մնուան յար-  
գանքը և սէրը: Ես կը վերսկսէի և կը շարունակէի իմայինների  
բարերար գործը: Առանց ֆառասիրութեան, կառավարելով հո-  
ղերս, ես կը մնայի այս երկրի աւանդական խորհրդականը: Իմ  
զաւակներից մինը նրա ներկայացուցիչն կը լինէր: Աննին սպա-  
սում էր ինձ: Նա իմ երեխայութեան չնորհալի բարեկամուհին  
էր, սահմանուած՝ զարդարել տունս իր գողտրիկ առաքինու-  
թեամբ: Նա տուեց իր գորովալիր հոգին ժակին, որովհետեւ  
սա եղաւ առաջինը, որ նայեց նրան սիրող աչքերով և որով-  
հետեւ սա կարողացաւ մոլորեցնել նրան այնպիսի մի սիրոյ  
հաւաստիքներով, որոնց կեղծութիւնը նրա պարզ հոգին չէր  
կարող կասկածել: Այս երեկոյ, մի քանի ժամից յետոյ, Աննին  
ամբողջովին նրանը կը լինի: Խեղճ փոքրիկ ծաղիկ, որի բուր-  
մոնքը միայն ես գիտեմ, և որը կը թառամի առանց նոյն իսկ  
որ հոտը քաշած լինեն:

Նա առանց գթութեան ծակոտում էր իր սիրտը իրական  
դժնդակ պատկերներով և խորացնելով իր տանջանքը, նա մտա-  
ծում էր:

—Աննին այնքան մաքուր է, որ ես տոփանք չէի զգում նրա համար, երբեք էլ չեմ զդացել Այն, իմ այժմեան յուղ- մունքս առաջ է գալիս աւելի կարեկութիւնից, քան սիրուց և եռ տանջում եմ նրանից, որ շատ ուշ հասկացայ իմ կեանքի նպատակը:

Նա հասկանում էր, որ իր սեպհական գոյութեան դա- տարկութեան զիտակցութիւնը, գոյութիւն, որի իմաստը մինչև այժմ չէր ըմբռնել, միանում էր իր մէջ դէպի դժբախտ զոհ Աննին ունեցած նախանձու կարեկցութեան հետ:

Խորասուզուած այս տխուր մտածմունքների մէջ, նա յան- կարծ գողաց, լսելով ֆավերայի ձայնը, որը մոռել էր սենեակը առանց իմաց տալու:

—Այնքան մութն է, որ ոչինչ չեմ տեսնում, ով կայ այս- տեղ, գոռաց ծեր զիւղացին, որ երերում էր:

Մթութեան մէջ լիւսիէնը չէր տեսնում, որ ծերունին շարունակ բռնում էր կահ կարասիքից:

—Ի՞նչ էք կամենում, ֆավերա, ասաց նա դառնալով դէ- պի նրա կողմը:

—Ի՞նչ եմ կամենում, ոմանք ամուսնանում են, ոմանք մենում, այդպէս է կեանքը:

—Նա հարբած է, մասձեց երիտասարդը:

Ծերունին անդադար շարունակում էր.

—Այդպէս, գուք ամուսնացնում էք մեր պատգամաւորին, իսկ ես, գերեզման եմ դնում մեր տանուտէրին. ի հարկէ, այդ վիշտը տանել կարողանալու համար պէտք էր մի երկու բաժակ աւելի կոնծել Հասկանում էք:

—Շատ լաւ, ձեր տանուտէրը շատ լաւ մարդ էր:

—Մեր տանուտէրը, նա ամենատխմար մարդն էր ամբողջ համայնքում:

Լիւսիէնը չը կարողացաւ պահել ժպիտը:

—Հասկանում էք, կակազում էր ֆավերան, նրան ընտրել էին հէնց նրա համար, որ ամեն բան իրանց կամքով քշեն և առաջ տանեն. Ամեն մարդ ինչ քէֆը ուզում էր, այն էլ ա- նում էր համայնքի մէջ...: Այդ պատճառով, թաղման ժամա- նակ միտք ծագեց ձեզ նրա տեղ տանուտէր ընտրելու. Դուք վերադարձել էք Պարիզից, ձեզանից աւելի յարմարը չը կայ, Զեր հանգուցեալ հայրը քսան տարի տանուտէր եղաւ. ինձ ու- զարիւ: Է՞ պատճանաւոր, պէտք է ընդունէք, այնպէս չէ:

—Ահ, ասաց լիւսիէն, շատ դարմացած, ուրեմն ինձ են

մտաքերել, որպէս զի համայնքի ամենից ա... մարդի տեղն բռնեմ:

Եւ խօսակցութիւնը կարճ կտրելու համար, նա ասաց.  
—Ես կը մտածեմ, իմ բարի Ֆավերա: Ինձ հանգիստ թող:  
Գիւղացին գուրս եկաւ մրթմրթալով.  
—Բարի զիշեր, պարոն մեր տանուտէր:

Ֆրանս. թարգմ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

(Կը շարունակուի)